

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Վերջին զանգի կապակցությամբ

26.05.2016



Միրելի շրջանավարտներ:

Մրտանց շնորհավորում եմ ձեզ դպրոցական վերջին զանգի կապակցությամբ:

Այսօր տոն է ձեզ համար և առանձնահատուկ տոն է, քանզի դուք Անկախ Հայաստանի 25-ամյա հոբելյանական տարվա շրջանավարտներն եք, որն ավելի պարտավորեցնող է դեպի կյանքի առավել ինքնուրույն փուլ քայլ կատարելու և այդ փուլում՝ ավելի գիտակցորեն ու կազմակերպված անցնելու ետ դպրոցական կյանքի ձեր տարիները:

Միրելիներս, արդեն դուք լիարժեքորեն ինքնուրույն եք տնօրինելու ձեր կյանքը, անցյալում թողնելով ձեր վարդագույն մանկության, գունազեղ պատանեկության տարիների պատմությունը և դպրոցական կրթության անվերադարձ հեռացող ժամանակահատվածը: Այդ տարիներին ձեր երազանքները թևեր էին առնում ընտանիքում և ձևավորվում դպրոցում ձեր շուրջը պարուրված անկեղծ ու ջերմ մթնոլորտում: Դուք գտնվում էիք ձեր հոգատար ծնողների և ուսուցիչների հոգածության ներքո:

Համոզված եմ, որ ձեր ընտանիքներից բխող ջերմությունը և սիրելի ուսուցիչների բարեմաղթանքներն ու խորհուրդները կօգնեն ձեզ, կյանքի գալիք ճանապարհը նույնպես անցնել արժանապատվորեն: Իսկ դպրոցում ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների շնորհիվ, դուք կարող եք հաղթահարել բոլոր դժվարությունները, լուծել հետագայում ձեր ճանապարհին հանդիպած ցանկացած խնդիր:

Համոզված եմ նաև, որ մեր մարզի գալիք տարիների պատմությունը, զարգացման տեմպերը պայմանավորված են լինելու նաև ձեզանով: Ուստի ձեր ընտանիքի, դպրոցի, ծննդավայրի, մեր մարզի և մեր երկրի վաղվա օրվա բարօրության համար կարևոր է լինելու նաև ձեր ներդրումն ու, պատասխանատվությունը ստնանձնած գործի հանդեպ, ուր էլ որ դուք լինեք:

Միրելի շրջանավարտներ, կրկին շնորհավորում եմ ձեզ դպրոցն ավարտելու և պատանեկությունից կյանքի երիտասարդական շրջան ոտք դնելու կապակցությամբ: Մաղթում եմ ձեզ բարի երթ, խաղաղ երկինք և հաջողություններ հետագա ձեր բոլոր ձեռնարկումներում: